— Օրհնութեան յանուն Աւետիսի Ղուկասեան ի Տփղիս։ Թ. 609։

— Յանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան, որով յայտնի ըստացմանէ հաշուոյ նոր գնեալ մեքենայից վասն տպարանի Աթոռոյս, առաքեալ Ս. Միւռոնի ի Կ. Պոլիս, եւ և բերեալ գրենոյ հանգուցեալ Տ. Գարեգին Եպիսկոպոսի Սրուանձտեան ի Տրապիզոնէ։ Թ. 622։

— Յանուն Տ. Սահակ քահանայի Սահակեան, միաբանի Մողնւոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա կամիլաւկայ գլխարկ։ Թ. 626։

— Յանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան, միաբանի վանից Աւագ եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա պատիւ աւագ քահանայութեան։ Թ. 652։

— Յանուն Տ. Յովհաննէս քահանայի Տ. Գասպարեան Ղարաբուլաղ գեղջ Ապարանայ, որով շնորհի նմա կամիլաւկայ գլխարկ։ Թ. 664։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ՀԻՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ. (կը շարունակուի) Կ. Կ. 289
2. Աղքատների խնամատարութիւնը քրիստոնէութեան յաղթութիւնից յետոյ (շարունակութիւն) . . . . Գ. Մ. 298
3. Յիսուսի Քրիստոսի նորագիւտ խօսքերը . . 304
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . . . 304

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Հ. Գելցեր, Համառօտութիւն Բիւզանդական կայսրների պատմութեան. . . Մ. Վ. . 309
6. Գրախօսութիւն . . . . Ս. Կ. 315

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

7. Կովկասի Պետական դպրոցների հարիւրամեայ կենաց համառօտ պատմ. Ս. Ց. 317
8. Օդի մաքրութիւնը առողջութեան համար Ս. Ց. 319
9. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . . 322

ԱԶԴԱՅԻՆ.

10. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . . . 325
ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ. . . . . 325

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. . . . . . . . . 329

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՅԱՒԵԼՈՒԱԾ. . . . . 330
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.



# ՆԵՐԲՈՂԵԱՆ

## ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑՆ ՄԵՍՐՈԲԱՅ,

### ԱՍԱՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ
### ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍՆԱՑԻՈՅ.

Այս գեղեցիկ ներբողը արտագրել ենք մի ընտիր ձեռագրից Թիւ 1366 և ըստ Կարինեանի 1330, որի վրայ մեր ուշադրութիւնը դարձրեց գրադարանապետ Տ. Սահակ վարդապետ Ամատունին. Նա գրուած է Կիլիկեան ժամանակում Յովհաննէս արքայեղբայր եպիսկոպոսի համար և մի մասը նրա ձեռքով. գիրքը մեծ է (35+26 սանտիմետր) ունի 434 թուղթ, գրուած է յղկած հաստ թղթի վրայ, երկսիւն գրութեամբ, բաւական խոշոր և գեղեցիկ բոլորգրով. կաշեայ կազմը, որ անկասկած շատ հին է և գուցէ նորոգուել է, ընդհանրապէս անվնաս է պահպանել ամբողջը, թէև մի երկու թերթ սկզբից և վերջից պակաս են և տեղ տեղ էլ գրութիւնը մաշուել, անընթեռնլի է դարձել. Ձեռագրի գլխաւոր նիւթը՝ Յոհան Ոսկեբերանի Գործոց Առաքելոցի մեկնութեան թարգմանութիւնն է, դըրա հետ միասին կան մի քանի փոքրիկ գրութիւններ այս կարգով.

1. Թղ. $1^{ա}$ Գլխակարգութիւն մեկնութեան Գործք Առաքելոցի.
2. Թղ. $2^{ա}$ Պատմութիւն յաղագս մասին սրբո առաքելոյն Պետրոսի և բերման ի Հռովմէ ի Հայս.
3. Թղ. $5^{բ}$ Երանելոյ սուրբ հաւրն Մովսէսի Խորենացո քերթողի՝ ի սուրբ Հռիփսիմեանցն գալն ի Հայս. և յաղագս սուրբ խաչին որ ի Վարագ ցուցաւ.
4. Թղ. $9^{բ}$ Մեր հրատարակելիք ներբողն է. «Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբազան եպիսկոպոսի և վարդապետի՝ Տէր Կարապետի Սասնացւոյ ի խնդրո հոմաղնեա եղբաւր Ճգնաւորի՝ յաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբա թարգմանչի և լուսաւորչի».
5. Թղ. $21^{ա}$ Խաւսք Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւո՝ ընդդէմ այնոցիկ որք թերացուցանեն զփառս Որդւոյն Աստուծոյ քան զՀաւրըն, եւ իջուցանեն զՀոգին Սուրբ ի հնազանդութիւն, և հաւասարեն ընդ հաւասարութիւն արարածոց.